№ 36 Կիրակի, Նոյեմբերի 13—1866. № 36.

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Թիֆլիսի առևտրական գազեթ:

Հրատարակվում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսվայ դիներ Մարտից մինչև Յունվարը քաղաքումս՝ 2 մանեթ 50 կոպ., դուրսը՝ 3 մանեթ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ

(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գազեթին ստորագրվիլ կարելի է խմբագրողի մօտ:
Գազեթումը հրատարակվելու կընդունվին մանաւոր յայտարարութիւններ: Գնեերի մասին կարելի է իմանալ խմբագրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

«Վաճառականը» 1867 թ-ին Տէրութենի կարգադրութիւնները: Ծառայողների վարձատրութիւնները: և փոփոխութիւնները: Տօրդեր: Մեր հողևորականների վրայ մէկ քանի խօսք: Զանազան տեղեկութիւններ: Առևտրական տեղեկութիւններ: Մանաւոր յայտարարութիւններ:

„ՎԱՃԱՌԱԿԱՆԸ„ 1867 ԹԻՒՆ.

Ինչպէս հրատարակել էինք „Վաճառականի„ 30-դ № ումը 1867 թվին „Վաճառականը„ կտրվի էնպիսի թերթերի վրայ, որ տարին հիմիկվան 4 կէս թերթի տեղ 5-ից մինչև 6-ը լինի իր սեծութիւնով: Գալ տարվան ստորագրվողները կստանան ձրիաբար „Առևտրական բառարան„, որի մէջ ամփոփված կլինին թէ առևտուրին վերաբերեալ գլխաւոր գործածված բառերը և թէ գլխաւոր փողերի որքանութիւնը Ռուսի փողի հետ համեմատելով: 1867 թվին „Վաճառականի„ մէջ կտրվին շարունակ ամեն նումերումը „Ռուսաց տելեգրաֆի ընկերութենից„ ստացած թէ առևտուրին և թէ միւս հասարակական գործերին վերաբերեալ նոր համբաւները: „Վաճառականի„ դինը գալ տարի թէ քաղաքումս և թէ դուրսը կլինի 5 մ. Գալ տարի „Վաճառականը„ կգրվի դայ հինգշաբթի օրերով:

Հիմիկվանից ընդունվում է գալ տարվան ստորագրութիւնը քաղաքումս՝ „Վաճառականի„ խմբագրողի և նրա գլխաւոր գործակից պ. Ա. Երիցեանցի մօտ, նմանապէս և գրավաճառ պ. Ա. Էնգիլհաճեանցի դրատանը, իսկ սաւառ քաղաքացիները դիմեն դառնան ուղղակի „Վաճառականի„ խմբագրողին էս հասցէով՝ „Վաճառականի„ խմբագրող Գէորգ Տէր-Աղէքսանդրեանցին Թիֆլիսումը„, իսկ Ռուսերէն՝ „Редактору Тифлисскаго Торговаго листка Егору Тер-Александрову въ Тифлисѣ„.

Խնդրում ենք 1867 թվի մեր գազեթին ստորագրվել ցանկացողներից, որ նրանք յայտնեն իրանց ցանկութիւնը մեզ մինչև էս տարվան նոյեմբերի վերջը, որ կարողանանք ստորագրվողների թվի համեմատ կարգադրութիւն անել գալ տարվան համար:

ՏԷՐՈՒԹԵՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Փոքր մաքսատան անդամ, նաղվորնի սովետնիկ Նիկողայոս ՏԷՐ-ՇՄՈՎԱՆՆԱՅԸ ստացաւ կոլլեժսկի սովետնիկի աստիճան 1866 թ. յունիսի 22-ին:

Թիֆլիսի գաւառական պրոկուրորի քրէական մասի ընկերի պաշտօնակատար, կոլլեժսկի ասսեսոր Յովհաննէս ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑԸ ստացաւ նաղվորնի սովետնիկի աստիճան, մի և նոյն թվին:

8-դ Մեժելից կոմիսիայի անդամի պաշտօնակատար, տիտուլեարնի սովետնիկ Զուրաբ ԽԱՆԳԱՄԱԼԵԱՆՑԸ ստացաւ կոլլեժսկի ասսեսորի աստիճան, մի և նոյն թվին:

Թիֆլիսի նահանգական պրոկուրորի պաշտօնակատար, տիտուլեարնի սովետնիկի Խաչատուր ԱՐՎԱՆԵԱՆՑԸ ստացաւ կոլլեժսկի ասսեսորի աստիճան, մի և նոյն թվին:

Կովկասեան փոխարքայի գլխաւոր կառավարութենի ֆինանսների դեպարտամենտի հաշվապահ, կոլլեժսկի սեկրետար Միքայել ԱՄԲԱՐԴԱՆԵԱՆՑԸ, գլխաւոր կառավարութենի թագաւորական կայքերի դեպարտամենտի երկրաչափ, կոլլեժսկի սեկրետար Արսեն ՐՈՏԻՆԵԱՆՑԸ, Կովկասեան փոխարքայի խորհրդարանի կանցելեարիայի ժուրնալիստ, կոլլեժսկի սեկրետար Նիկողայոս ՇԱՐՈՒԵԱՆՑԸ և Կովկասեան մաքսատան հաշվապահ, կոլլեժսկի սեկրետար Ստեփան ԻՍՊԱՆԴԻԱՐԵԱՆՑԸ ստացան տիտուլեարնի սովետնիկի աստիճան, մի և նոյն թվին:

— Նախիջևանի նահանգական ուսումնարանի պատրաստական դասատան վարժապետ Խաչատուր ԹԱԼԱՆԹԱՐԵԱՆՑԸ նշանակվեցաւ Երևանի գաւառական դատարանի ատենադպիր, 1866 թվի սեպտեմբերի 9-ին:

ՏՕՐԳԵՐ.

Թիֆլիսի նահանգական կառավարութենումը էս նոյեմբերի 25-ին նշանակված է Բորչալուի կողմը Շինիխ գիւղից մինչև Սա-

դախլօ գիւղը գտնուած Գեբեդ անունով գետի մէջ ձուկը բռնելու իջարով տալու տորգը։

Ալէքսանդրոպօլի նահանգական կառավարութիւնումը էս նոյեմբերի 25-ին նշանակված է Ալէքսանդրոպօլ քաղաքի մէջ 1867 թւի յունվարի 1-ից երեք տարի ժամանակով կշռի և տաւար մորթելու հարկերի ժողովելու իջարով տալու տորգը։

Թիֆլիսի գաւառական կառավարութենումը 1867 թւի յունվարի 12-ին նշանակված է Սոնղալուխ գիւղումը գտնուած Թիֆլիսի բնակիչ Գրիգոր Ատամովի 1650 մ. գին դրած այգու ծախելու տորգը։ Էդ այգու գետինը իշխանուհի Էրիսթովինն է և Մուխրանսկունը։

Էլի էնտեղ 1867 թւի յունվարի 14-ին նշանակված է Կումիս գիւղումը գտնուած Թիֆլիսի նահանգի բնակիչ Մոսէ Շերեշաշվիլու 1050 մ. գին դրած այգու ծախելու տորգը։

Էլի էնտեղ 1867 թւի յունվարի 16-ին նշանակված է Թիֆլիս քաղաքի 2-դ մասի 4-դ կվարտալումը, Սուրբ-Սարգսի քուչումը գտնուած աղնիւ Աբաս-Կուլի-Բէկ Եդիգարովի 1100 մ. գին դրած տան և այգու ծախելու տորգը։

Էլի էնտեղ 1867 թւի յունվարի 20-ին նշանակված է Թիֆլիսի 2-դ մասի 1-ին կվարտալումը գտնուած, Թիֆլիսի քաղաքացի Յարութիւն Քոչարեանցի 2000 մ. գին դրած տան ծախելու տորգը։

Կովկասեան պրիկազումը 1867 թւի յունվարի 20-ին նշանակված է Թիֆլիսի 2-դ մասի 1-ին կվարտալումը գտնուած որբեհրի իշխանուհի Սալոմէ Բագրատիօն-Մուխրանսկու տան ծախելու տորգը։ Էս տան պարտքն է 15,000 մ.

Էլի էնտեղ 1867 թւի փետրվարի 13-ին նշանակված է Մարաբդա գիւղումը գտնուած կոլլեժսկի ասեսոր իշխան Լեօնիդ Բարաթովի երեք այգու, ջրաղացի և միւս շինութիւնների ծախելու տորգը։ Էս կայքի պարտքըն է 3000 մ.

Էլի էնտեղ էս նոյեմբերի 18-ին նշանակված է Թիֆլիսի 4-դ մասի 2-դ կվարտալումը գտնուած տիտուլեարնի սովետնիկի կին Պելագեյա Դաւթեանցի տան ծախելու տորգը։ Էս տան պարտքն է 6350 մ.

Ելիսաւետպօլի նահանգական կառավարութենումը 1867 թւի յունվարի 24-ին նշանակված է Ելիսավետպօլ քաղաքումը գտնուած Ելիսավետպօլի բնակիչ Աւետիս, Գրիգոր և նրանց մէր Ոսկի Աղաբաբեանցների 600 մ. գին դրած տան ծախելու տորգը։

Բաքուի գաւառական կառավարութենումը 1867 թւի յունվարի 16-ին նշանակված է Բաքուի մէջ գտնուած Շուշվայ բնակիչ Յակոբ Զարաֆեանցի 6560 մ. գին դրած տան ծախելու տորգը։

Էլի էնտեղ 1867 թւի յունվարի 16-ին նշանակված է Շուշվայ նահանգի Աթ-Լմաղլու գիւղումը գտնուած Շուշվայ բնակիչ պրապորշչիկ Ալավերդան Բէկի և նրա եղբօր Նարիման Բէկ Նարիման Բէգովի գետնի և Շուշի քաղաքումը գտնուած նրանց 1350 մ. գին դրած տան և այգու ծախելու տորգը։

Երեանի նահանգական կառավարութենումը 1867 թւի ապրիլի 3-ին նշանակված է Երեանումը գտնուած էնտեղացի Հաջի Բաղիր Քեալբալայ-Մահմադ-Վալի օղլու 900 մ. գին դրած տան ծախելու տորգը։

ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՎՐԱՅ ՄԷԿ ՔԱՆԻ ԽՕՍՔ։

1.

Քահանաների պարտքը չէ թէ միայն մկրտութենի, պսակի և թաղման օրէնքների կատարելն է, այլ և ժողովրդի համար առաքինութենի և բարի վարքի օրինակ լինիլը։ Քահանաները և առհասարակ եկեղեցու միւս պաշտօնեաները պարտական են ծառայել դլխաւորապէս իր եկեղեցու, այս ինքն ժողովրդի հոգեւոր պիտոյքներին և բարոյական պահանջմունքներին, որովհետև եկեղեցի ասելով, ամենքն էլ գիտեն, որ պէտք է հասկանանք ոչ թէ միայն հասարակական աղօթք անելու տունը, միայն նրա պատերը և սիւները, չէ, այլ էն մարդկանցը, որոնք ժողովվում են էն տան մէջը։ Ժողովուրդն է եկեղեցի, որ և նմանապէս հօտ է կոչվում, այս ինքն սուրբ և գտնվում է հովւի, այս ինքն չոբանի—եկեղեցու պաշտօնեաների վերակացութենի տակը։ Հենց էդուր համար էլ է, որ ամեն անգամ մեր քահանացուներ ընտրելիս, մեր եկեղեցու օրէնքը իրաւունք է տալիս առհասարակ մեր բոլոր ժողովրդին ձէն տալ էդ մարդու արժանաւորութիւնների և պակասութիւնների մասին։ Մեր եկեղեցու կանոնը կամենում է, որ հօտը էնպիսի հովիւ ընտրէ իրա համար, որին աւելի յարմար և արժանի է համարում ինքը։ Էս կանոնի գեղեցկութիւնը աննման է։ Բայց ի՞նչ անեսոր գործով ոչ թէ միայն չէ կատարվում էդ կանոնը, այլ և խորթ բան են համարում դրա կատարելը և էդպիսի բաներումը խառնվելը։—Է՜հ, ի՞նչ իմ բանն է, յետ քաշվելով ասում է մեր ժողովուրդը, իրանք գիտեն, ո՞ւմը կամենան ընտրեն և ի՞նչ ուզենան, անեն„։ Մէկ հարցնող լինի դրանց, թէ այ պատուելիներ, մէկ լաւ մտածեցէք, տեսէք, թէ էդ մարդիկը, որ քահանայ են դառնալու, ո՞ւմ համար,—չէ՞ որ քեզ համար, մեզ բոլորիս համար։ Մեր ընտանիքների և մատաղ մանուկների մէջ պիտի նստի և վեր կենայ նա, պէտք է խօսի, խրատէ և խորհրդակից լինի նրանց հետ։ Բայց մի՞թէ ամեն մարդու կարելի է ներս թողնել մեր տուն և մեր մատաղ մանուկների մօտ։ Մեզանից ամեն մէկը իրա տան մէջ ամենևին չէ կամենում մէկ անհաւատարիմ և անկարգ ծառայ ընդունել. առաջ հարց ու փորձ է անում նրա մասին, փորձում է նրան և յետոյ միայն ընդունում է։ Ծառան ի՞նչ ազդեցութիւն կարող է ունենալ գերդաստանի վրայ—բայց գերդաստանի գլուխը աշխատում է էնպիսի ոքմին ճարել, որ իր զաւակների համար վատ օրինակ չլինի։ Բայց հոգեւորականների գործումը մենք շատ ցիջող բնութիւն ենք տանում։ Տգէտը, անուսումը, հոգով և մարմնով աղքատը աղաչում է հոգեւորական դառնալու։—Թո՛ղ, ասում ենք, գնայ, մէկ կտոր հացի տիրանայ, խեղճ մարդ է„։ Բայց մենք կասենք, որ եթէ էդպիսի տգէտ և խեղճ մարդիկ հացի կարօտ են մնացած, աւելի լաւ կլինի, որ եղբայրական սիրու օրէնքների հիման վրայ, օգնենք նրանց և մէկ կերպով ապրուստ տանք, քան թէ էդպէսներին մեր գլխին հովիւ ու պահապան կարգենք, թէ ի՞նչ է, քաղցած չմեռնեն։ Ի՞նչ հովիւ և ի՞նչ տէր կարող է լինել նա ժողովրդի համար,

մինչդեռ ինքը ոչ իր գլուխն է ճանաչում և ոչ իր վսեմ պաշտօնը:

Եւ զորդ որ մեծ և վսեմ է քահանայի և առ հասարակ եկեղեցականների պաշտօնը: Բայց ի՞նչ, որ դրանք միջնորդ և բարեխօս են մարդկանց և Աստուծու մէջ, հաշտեցնում են ապաշխարող մեղաւորին մեր Անոխակալ Փրկչի հետ, դրանք ունին նմանապէս և ուրիշ մեծ մեծ պարտականութիւններ դէպ ի իրանց ժողովուրդը: Դրանք պէտք է լինին մեր ժողովրդի համար հոգևորական և բարոյական մասերումը ուսուցիչ իրանց շարունակ քարոզներով: Դրանք աւելի միջոց ունին և մեծ ազդեցութիւն մանաւանդ հասարակ ժողովրդի վրայ՝ նրանցը դէպ ի ուսում, գիտութիւն, արհեստներ և ամեն պատուաւոր գործերը խրախուսելը: Նրանց պարտքն է հասկացնել մեր արհեստաւորներին, վաճառականներին, որ դրանք իրանց որդքերանցը ուսումն տան ոչ թէ մէկ քանի տարով, ինչպէս հիմի են անում, այլ էնքան ժամանակով, որքան հարկաւոր է բոլորովին կատարելագործվելու որ և իցէ արհեստի կամ գիտութեան մէջ: Պէտք է հասկացնէ նրանցը, որ իրանց գիտեցած արհեստներից աւելի նուրբերը կան, որ նրանց յայտնի չեն. բայց եթէ իրանք չեն գիտի, պէտք է աշխատեն, որ գոնեա իրանց որդքերանցը սովրեցնել տան: Պէտք է նրանց ականջներումը հալեն Քրիստոսի բոլոր պատուէրները և համոզեն նրանցը պատուաւոր կերպով և բարի խղճմտանքով ներգործելու ամեն գործերի մէջ. ճշմարտութիւնը պահպանել իբրև իսկական ճշմարտութեան աշակերտ: Հասկացնել նրանց, որ ճշմարտութիւնը ոչ թէ միայն ազնիւ գործ է և մաքուր խղճմտանքի պտուղ, այլ և ձեռնտու բան է մարդու կեանքի մէջը, որովհետև ճշմարիտ մարդուն ամեն գործերումը աւելի են հաւատում, քան թէ ստախօսին: Եւ էս բոլոր բաները քահանաները աւելի միջոց ունին գլուխ բերելու, քան թէ ուրիշ ովոր կուզէ լինի:

Պատճառները յայտնի են: Առաջին, որ ժողովուրդը իր աղօթարանումը, սուրբ տաճարումը և էն էլ քահանայի բերանից է լսում էդ խօսքերը և երկրորդ, որ մանաւանդ մեր հասարակ ժողովուրդը ուրիշ կերպով հնար չունի էդպիսի բաներ լսելու.—դա չէ իմանում գրել—կարդալ: Ժուռնալ ու գազեթ-ասած բաները, որ առ հասարակ կարդացողներին ժամանակի պահանջմունքների յարմար ուղղութիւն տվողներն են, նրանցը նոր և օգտակար մտքեր հաղորդողներն են, բոլորովին անծանօթ են մեր հասարակ ժողովրդին: Եւ ոչ թէ միայն հասարակ, անգրագէտ ժողովրդի վրայ, այլ և բարձր կարգի ժողովրդի, գրագէտների վրայ էլ աւելի մեծ ազդեցութիւն ունի ասված խօսքը, քան թէ գրվածը:

Ղևոնդ երէց Խարազեանց:

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Ռուսաց Կայսեր հրովարտակը ռեկրուտների ժողովելու մասին: Ռուսաց Կայսրը էս տարի նոյեմբերի 18-ին գրված հրովարտակով հրամայեց՝ 1867 թւի յունվարի 15-ից մինչև փետրվարի 15-ը ռեկրուտներ ժողովել զօրքի և նաւատորմիղի լրացնելու համար էս հետևեալ տեղերից՝ Արխանգելսկի, Կիևի, Վոլինի, Պոդոլսկի, Վիլենսկի, Գրոդնենսկի, Կովենսկի, Մինսկի, Մոգիլեօվսկի և Վիտեբսկի գաւառներից, Ստավրոպոլի գաւառի Ստավրոպոլի օկրուգի գիւղացիներից, Սիմբիրսկի քաղաքացիներից (մեշչանին), Վոլոգդա գաւառի Ուստսիսոլսկի, Եարենսկի, Սոլվիչեգոդսկի և մէկ մասով էլ Վելսկի նահանգների թագաւորական գիւղացիներից և նմանապէս Վոլոգդա գաւառի Ուստսիսոլսկի, Եարենսկի և Սոլվիչեգոդսկի նահանգների քաղաքացիներից և ժամանակաւոր պարտաւոր գիւղացիներից: Ինչպէս երևում է էդ հրովարտակից, նշանակված տեղերի մէջ բնակված 1000 հոգուցը՝ 4,—4 մարդ պէտք է ռեկրուտ վեր առնվի:

Խօլերան Փոթումը: Էս տարի նոյեմբերի 14-ին գրում են Փոթից, որ էնտեղ էս տարվան օգոստոսի 28-ին խօլերայ է լոյս ընկել: Մինչև նոյեմբերի 8-ը փոքր է եղել հիւանդանում, բայց սեպտեմ- 8-իցը սաստկացել է խօլերան: Յետոյ սեպտեմբերի 20-ից թուլացել է և նոյեմբերի սկզբին համարեա թէ վերջացել է: Էդ միջոցներումը խօլերայով մեռել է էնտեղ 80 մարդ, որոնցից 50-ը զինուորականներից է եղել:

Ահագին պանիր: Ամերիկայումը Տորոնտո քաղաքի մօտ մէկ կտոր պանիր են շինել էս տարի յունիսին, որի քաշն է 7,000 ֆունտ: Էդ պանիր շինելու համար գործ է ածված մէկ օրումը 7000 կովից կթած կաթը: Պանիրը ուղարկվեցաւ Նիւեօրքի տնտեսական աշխարհահանդիսումը: Շատերը կամեցան առնել էդ պանիրը, բայց նրա տէր պ. Հարրիսը 6,000 դոլլար աւելի վրայ էլ չհամաձայնեցաւ ծախելու, այլ պահեց Պարիժի աշխարհահանդիսումը ուղարկելու:

Տասնումէկ յարկանոց տուն Պարիժումը: Պարիժումը հիմի փորձի համար մէկ տուն են շինում 11 յարկանոց: Որովհետև էդ քաղաքի կեդրոնումը գետինը շատ թանկ է ծախվում, էդոր համար էդ տեղերումը տուն շինողները աշխատում են տան յարկերն աւելացնելու: Էդ նոր շինվելու տունը սանդուխտ չպէտք է ունենայ, այլ մէկ առանձին մեքենայով կբարձրացնէ ներքևից վերև թէ մարդկանցը և թէ ամեն հարկաւոր բաները: Էդ մեքենան րոպէն մէկ անգամ կբարձրանայ և կցածանայ, էնպէս որ 11-դ հարկումը կացողը բոլորովին հանգիստ կբարձրանայ իր տեղը: Վերևի յարկերը, ինչպէս երևում է, ամեն յարմարութիւնները կունենան կենալու համար, որովհետև էնտեղ օդն աւելի պարզ կլինի, լաւ տեսարաններ են բացվում էնտեղ կացողների առաջը և կառքերի ձէնը բոլորովին չի արգելի նրանցը:

Կրինոլինների Ֆաբրիկայի գործունէութիւնը: Սաքսոնիայի ֆաբրիկաներից մէկումը էս վերջին 12 տարումը պատրաստել են 9,597,000 հատ կրինոլին: Որովհետև մէկ կրինոլինի վրայ 90 արշուն պողպատէ մաւթուլ է գնում, ուրեմն վերոյիշեալ կրինոլինների շինելու համար գործ է ածվել էս հաշւով 863,784,000 արշուն մաւթուլ: Երկրագունդը, որի շրջագիծը 71,982 աշխարհագրական մղոն է, էդ.քան մաւթուլով կարելի է $13^{1}/_{2}$ անգամ փաթաթել:

Ռուսաց Կայսեր ժառանգի և արքայեսսա Դագմարայի պսակը: Գրում են Պետերբուրգից, որ Նորին Կայսե-

բական Բարձրութիւն ժառանգ Ալէքսանդր Ալէքսանդրովիչի և պրինցէսսա Դագմարայի հանդիսաւոր պսակը կատարուել է նոյեմբերի 28-ին։ Դագմարայի անունը դրել են Մարիա Ֆէօդորովնա։ Թիֆլիսումն էլ, ինչպէս միւս եկեղեցիներումը, նմանապէս և հայոց վանքի եկեղեցումը մոլեբեն կատարվեցաւ նոյեմբերի 30-ին, կիրակի օրը, էդ պսակադրութեան պատճառով։ Վանքումը Սրբազան Մակար Առաջնորդը էդ հանդիսի յարմարաւոր ճառ ասաց, օրհնելով ինչպէս Արքայազն նոր պսակվածներին, նմանապէս և Թագաւորական բոլոր պալատը։

Եկեղեցումը քարոզ ասելու մասին։ Ռուսաց Թագաւոր Կայսրը էս տարի ապրիլի 20-ին հոգևորական կոնսիստորիաների կանոնադրութեան 10-դ յօդուածը փոխել է էս ձևով։ «Վիճակներ ունեցող քաղաքների կաթողիկէ եկեղեցիներումը սահմանել հերթով քարոզներ։ Քարոզները պէտք է ասեն քաղաքի և քաղաքների մօտ եղած եկեղեցերու պաշտօնեաները իւրաքանչիւր տարվայ նոյեմբեր ամսին կոնսիստորիայի շինած և վիճակաւոր առաջնորդի հաստատած կիրակի, հանդիսաւոր և տօն օրերի ցուցակով։ Քարոզների գրելը կյանձնվի նմանապէս վիճակի և միւս եկեղեցերու պաշտօնեաներին, որոնք աւարտել են ուսման ընթացքը ակադեմիաներումը կամ սեմինարիաներումը, միայն էն պայմանով, որ էդ քարոզները ասվին իրանց թեմի եկեղեցերումը։ Վիճակաւոր առաջնորդի իշխանութենից է կախված էդ քարոզների գրելու կարգի սահմանելը, հոգևոր ցենզորներին ներկայացնելու էն քարոզները եկեղեցումը ասելուց առաջ կամ յետոյ և եկեղեցերու պաշտօնեաների էս պարտաւորութիւնների կատարելու վրայ վերահասութիւն ունենալը»։

Էս բանը հաղորդելով մեր ընթերցողներին, մենք արդէն առաջուց գիտենք նրանց էս կարգադրութեան մասին լաւ կարծիք ունենալը։ Մեզանից ո՞վ չէ համոզված, ո՞վ չէ տեսել իր աչքով ու լսել ականջներով մեր եկեղեցերու մէջ էնպիսի քարոզներ, որից կամ ոչինչ չէ հասկանում ժողովուրդը, որովհետև բառերը շատ խրթին են լինում և կամ էնպիսի առակներ ու հեքիաթներ է խառնում, որոնցից օգուտ չէ կարելի քաղել։ Առաջին տեսակ քարոզները բոլորովին անօգուտ են մեր ժողովրդի մեծ մասի համար, իսկ երկրորդները մինչև անգամ վնասակար են՝ նրանց երևակայութեան վրայ սաստիկ ներգործելով։ Ամեն քահանայ և վարդապետ մեզանումն ասում է էնպիսի քարոզ և էնպիսի առարկաների վրայ, որի վրայ ուզում է, առանց ումքու հարցնելու և քննութեան տակն ընկնելու։ Բացի էդ մեր եկեղեցերումը քարոզները ասվում են միայն մեծ պասի կիրակի օրերով, որ շատ ու շատ քիչ է, մեր կարծիքով, մեր ժողովրդի համար։

Էս ծանօթութիւնները աւելացնելով, մենք ցանկանում էինք էս առարկայի վրայ նրանց ուշադրութիւնը դարձնել, ումից կախումն ունի մեզանումը էնպիսի կարգադրութիւնների անելը։ Ի հարկէ մեր վիճակաւոր առաջնորդների վրայ է մեր խօսքը։ Յոյս ունինք, որ մեր խօսքը անապատի մէջ ասված խօսքերին չի նմանիլ։ Եւ երբ մեր առաջնորդների կողմից էնպիսի կարգադրութիւնների ձէնն իմանանք, կաշխատենք հրատարակելու նրանց սրբազան անունները իրանց արած կարգադրութիւնների հետ։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ։

Լիվերպուլ, նոյեմբերի 23։

Բամբակը դարձեալ վեր քաշվելու վրայ է, որովհետև Ամերիկայից համբաւ ստացվեցաւ, որ էնտեղ ցուրտը շատ վնասել է բամբակին։ Ամերիկայի միջին տեսակի գինն է 15 պէնս։

Պետերբուրգ, նոյեմբերի 25։

Կուրսը Լոնդոնի վրայ $31\frac{3}{8}$ պէնս։
Պարիժի վրայ . . 327 սանտիմ։
Ոսկին . . . . . 6 մ. 25 կ.

5% Լատարեյով առաջին փոխառութեան տոմսակները $110\frac{1}{2}$ մանէթ։ — Երկրորդինը 107 մանէթ բանկումը, բայց բիրժայումը 105 մ. է հասնում։

Պետերբուրգի բանկը բարձրացրուց իր դիսկոնտը մինչև 10%։

Մոսկով, նոյեմբերի 23։

Նուխվայ հասարակ թելը 315 մ.
— Բարձր տեսակը 350 մ.
Պարսկաստանի բամբակը 15 մ. 50 կ.
Շաքարը . . . . . 9 մ.
Դերբենդի և Ղուբայի տորոնը 5 մ.

Թիֆլիս, նոյեմբերի 5։

Շաքարը Ֆրանսիացոց 9 մ. 90 կ.
— Ռուսինը . . 10 մ. 45 կ.
Արծաթը 84% . . —
— 72% . 75 մ. —
Ոսկին . . . . 6 մ. 80 կ.

ՄԱՍՆԱՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Առաջիկայ 1867 թուականի „ԳԱՐՈՒՆ„ ամսագիրը կհրատարակվի մի և նոյն ուղղութեամբ։ Եւ որովհետև այս ներկայ տարումն ապրիլ ամսին սկսուեցաւ հրատարակումն, ուստի դեռ ևս չէ աւարտած, սակայն կխոստանանք, որ այս 1866 թուականի ամբողջ տարուանը հասցնել մեր բաժանորդներուն, իսկ 1867 ինը սկսել յունվար ամսին։ Ցանկացողները Թիֆլիզի մէջ կարող են գրվել ուղղակի ինձ մօտ և Աւետիք Էնֆիաճեանցի գրավաճառանոցը, իսկ դրսի քաղաքներում և գիւղերում կարող են նամակով դառնալ դէպ ի խմբագրատունը այս հասցէով „Въ Редакцію Армянскаго журнала Весна„ և իրանց հասցէն ևս յայտնեն ճշդութեամբ։ „ԳԱՐՈՒՆ„ ամսագրի տարեկան գինն է 6 ռուբլի արծաթ, թէ Թիֆլիզումը և թէ ուրիշ քաղաքներում։

Այս ամսագիրս պարունակելով իւր մէջ Եկեղեցւոյն վերաբերեալ յօդուածներ, յոյս կայ, որ ամենայն տեղի Սրբազան Առաջնորդներն առաջարկեն հոգևորականաց ստանալու, որի տարեկան 6 ռուբլի գինն, չունի նշանակութիւն ինչ, իսկ յօդուածներն կտեղեկացնեն նրանց՝ իւրեանց եկեղեցւոյ պատմութեան, նորա ուղղափառ վարդապետութեան, զանազան հոգևորական գրուածներին, և միւս քրիստոնեայ ազգաց եկեղեցեաց պատմութեանը, որ անշուշտ հարկաւոր են հոգևորականաց գիտենալու համար։ Եւ ամենայն օրագիրներ և լրագիրներ հետ զհետէ կատարելագործվում են, երբ որ ունենում են նիւթական միջոցներ։

Հրատ. և խմբ. Ստեփաննոս աւագ քահանայ ՄԱՆԴԻՆԵԱՆՑ։

Էս մէկ քանի օրումը կդուրս գայ պ. Հ. Էնֆիաճեանցի և ընկ. տպարանից „Վաճառականի„ 32, 33 և 34 №№ ներիցը դուրս տպված։ „ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ„ առանձին տետրակով և կծախվի պ. Ա. Էնֆիաճեանցի գրքատանը թէ քաղաքումս և թէ քաղաքից դուրս ուղարկելով հատը՝ 20 կոպէկով։

дозволено цензурою
Ноября 13-го 1866 г

Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. ՏՊԱՐԱՆՈՒՄԸ։

Խմբագիր և հրատարակիչ Գ. Տէր Աղէքսանդրեանց։